

Տարեկան գինը 7 րուբլ, կէս տարեկանը 4 րուբլ:

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը, պ. Ծատուրեանի և
Արամյանեանի խանութում
Պատրաստողացիք դիմում են ուղղակի
Դուխա. Редакция „Маска“

ՄԱՍԿ

Խմբագրատանը բաց է առաջատան 18-րդ
(Բացի կիրակի և տոն օրերից):
Յայտարարութիւնները ընդունվում են ամեն օր:
Յայտարարութիւնների համար վճարում են
խաբարանիւր բառին 2 կոպէկ:



„ՄԱՍԿ“ լրագրի ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ
խնդրում է այն բաժանորդ-
ներին, որոնք այս ամբողջ կամ
կէս տարեկան բաժանորդական գինը լնովին չեն
տուել խմբագրութեանը, շտապէլ լրացնել
իրանց բաժանորդագիրը:

ԲՈՎԱՆԴԱՌՈՒԹԻՒՆ

Թուաց մամուլը հայերի մասին:—Ներքին
տեսութիւն: Պատերազմական բեմից: Մի
քանի դպրոցական խնդիրներ: Նամակ Երևանից:
Ներքին լուրեր:—Արտաքին տեսութիւն:
Թիւրքիա: Ֆրանսիա: Արտաքին լուրեր:—Խառն
լուրեր:—Յայտարարութիւններ:—Տեղեկա-
ցոյց:—Ֆելիետոն:

ՌՈՒՍԱՅ ՄԱՄՈՒԼԸ ՀԱՅՐԻ ՄԱՍԻՆ

II

Մեր անցեալ համարում մենք
յիշեցինք «С. Петербург. Вѣ-
дом.» լրագրի № 119-ի առաջ-
նորոգ յօդուածը: Այժմ կուզե-
նայինք մեր ընթերցողներին ծա-
նօթացնել այդ յօդուածի բովան-
դակութեան հետ:

«С. Петерб. Вѣд.» լրագիրը
արդէն քանի մի անգամ այն միտքն
է յայտնել, որ անհնարին է պահ-

պանել Թիւրքիայի ներկայ դրու-
թիւնը, որ և է կառավարչական
աննշան փոփոխութիւններ անե-
լով, այլ պէտք է հիմնական վե-
րանորոգութիւններ անել նրա պե-
տական կազմակերպութեան մէջ:

Թիւրքիան ոչ թէ միայն որպէս
պետական մարմին, բայց և որպէս
հասարակական և բարոյական ամ-
բողջութիւն՝ գոյութիւն չէ կարող
ունենալ: Մահմետականութիւնը
սպանել է նրա մէջ առողջ դա-
տողութիւն, խղճմունք, ամօթ...
Բոլոր հասարակական դասակար-
գերը, կառավարչական շրջաննե-
րից սկսած մինչև ժողովուրդի ստո-
րին դասակարգերը՝ փչացած, ան-
բարոյականացած են....

Միակ միջոց փրկել այդ փտած
պետութեան այս կամ այն, գեո-
լի մէջ կենք ունեցող մասը,
այն է՝ որ յիշեալ մասը ազատվի,
բաժանվի, եթէ ոչ կատարելա-
պէս, գոնէ մասամբ կենտրոնական
Թիւրքիայի, այդ փտած մարմնի
հետ անմիջական յարաբերութե-
նից: Լը ճշմարիտ մենք տեսնում

ենք որ Թիւրքիայի այն նահանգ-
ները, որոնք ներկայ դարի առա-
ջին կիսում Ռուսաստանի ջան-
քերով ստացան աւատական իշ-
խանութիւնների իրաւունքը, ինչ-
պէս Բուսինիա, Սերբիա (էլ չենք
խօսում Գունաստանի և Չէրնո-
գորիայի մասին, որոնք բոլորովին
ազատվեցան Թիւրքիայից) անհա-
մեմատ աւելի ծաղկած դրութեան
մէջ են գտնվում, քան թէ Թիւր-
քիային հպատակ մնացած՝ Բուլղա-
րիա, Հերցեգովինա, Բոսնիա, կամ
յունական մի քանի նահանգներ:

Վեր առնենք, օրինակ, մի և
նոյն աշխարհագրական և տեղա-
գրական դրութեան մէջ գտնվող
Դունայ գետի և Դրինա գետի
աջ և ձախ ափերի վրա գտնվող
երկիրներ, վեր առնենք Սերբիա և
Բոսնիա նահանգները: Սերբիա,
կաղմբելով անկախ աւատական իշ-
խանութիւն, իր տնտեսական, ֆի-
նանսական, դատաստանական, բա-
րոյական և ուսումնարանական կող-
մից հազար անգամ բարձր է իրան
հարևան Բոսնիա նահանգից, որ

չը նայելով իր հողի և բնութեան
համեմատական հարստութեանը,
մնայով Թիւրքաց նահանգ, գտնու-
վում է ընկած, անշարժ դրութեան
մէջ, ժողովուրդը թուով պակա-
սում է, կորչում է, ամեն բան
աւերակ և անապատ է դառնում...
Սերբիայում կան յարակցութեան
ճանապարհներ, կայ անձնական և
կայքի ապահովութիւն, կան վա-
յելուչ եկեղեցիներ և ուսումնա-
րաններ, ժողովուրդի թիւը աճում է
և ազգը տնտեսապէս օրից օր
հարստանում է, — իսկ հարևան
Բոսնիայում, ոչ թէ պատերազմի
ժամանակ միայն, բայց և խաղա-
ղութեան ժամանակ, ժողովուրդը
թուով պակասում է, հողագործը
թողնում է իր արտերը և վա-
զում է, փախչում է անտառները
և սարերը, չը կան ոչ ուսումնա-
րաններ, ոչ ճանապարհներ....

Նոյն փոխադարձ յարաբերու-
թեան մէջն են, եթէ համեմա-
տենք միմեանց մէջ Ռուսաստանի
և Թիւրքիայի Հայաստանի մա-
սերը:
Խաբարանիւր մարդը միայն ինքն է լինում պա-
տասխանատու իր գործած մեղքերի և յանցանք-
ների համար, իսկ Աղամը պատասխանատու էր
ամբողջ մարդկութեան համար, — դուք երևի չէք
կարողանալ այդ տեսակ խոր փիլիսոփայական,
հոգեբանական և աստուծաբանական հարցին
պատասխանել... Իսկ Ներսիսեան դպրոցի եր-
րորդ դաստան աշակերտները գիտեն այդ ան-
բացատրելի աստուծաբանական, հոգեբանա-
կան, բարոյական և փիլիսոփայական երեւոյթի
պատճառը, չնորմով իրանց երեւելի կործանողից
ներկայ դարիս նշանաւոր փիլիսոփայ աստուծա-
ծաբանի, բայց զփոխապէս լուսաւորված աշ-
խարհում անյայտ մնացած քահանայ Սուլեյմա-
նի: Պատճառը որ Աղամը պատասխանատու էր
մեր բոլորիս մեղքերի և յանցանքների համար,
ուրեմն այն յանցանքների և մեղքերի համար էլ
որ ինքն չէ գործել և մտածում էլ չէ ունեցել
գործել, իսկ մենք պատասխանատու ենք մի-
միայն մեր անձնական մեղքերի և յանցանքների
համար, — այն է, որ Աղամը մարդկութեան ծառի
արմատ է, իսկ մենք ծառի մրգեր ենք: Ինչ
բան որ անեն ծառի արմատների վրա, ինչ բան
որ խառնեն հողի մէջ, որտեղ ծառի արմատներ
են գտնվում, ամեն բան ներգործութիւն կունե-
նայ ծառի բուսի, ճիւղերի, տերևների, ծաղիկ-
ների և պտուղների վրա...
Եւ այդ տեսակ խնդր հարցեր և պատաս-
խաներ լսելու ժամանակ, դպրոցի տեսուչ, պ.
Մանդինեանը խորամուկ կերպով աչքերը բաց
էր անում ու հուպ տալիս...
Ներսիսեան դպրոցի վրա խօսելով, յիշեցի
հետեւեալ նորութիւնը: Առում են որ այդ դըպ-
րոցի տեսուչ պ. Սեդրակ Մանդինեանը մտցրել
է դպրոցի բոլոր դասատուներում ջուլթակի
(սկրիպկայի) վրա անկուղ դասատուութիւնը,
որպէս զարգացնող ամենամեծ և ամենալա-
մանկավարժական միջոց: Այդ նոր ձևի ընդհա-
նուր կրթողական դասատուութեանից այնպիսի

ՖԵԼԻԵՏՈՆ

Ո՛վ է Ասիացին:—Ինձ ոչ ոք չէ ճանաչում:—
Թիֆլիսի Գայեանեան ուսումնարանը:—Լա-
տիներէսական և տալիս մտածողները:—
Վարձակները և վարձուները:—Ներսիսեան
դպրոցի հարցաքննութիւնները:—Կրօն, փիլի-
սոփայութիւն և լուսնաւաճան քահանայ:—
Մանդինեան:—Հոգեւոր դպրոց, և ջուլթակ:—
Մէքելի խանութները և դարբինները:—Նախա-
գիծ:—Ներսիսեան դպրոցի հոգաբարձութեանը
մի առաջարկութիւն:—Մեր հոգեբանականները:—
Մեր տեղական լրագրութիւնը:—Փիլի գիւղը:

Մինչև այժմ չառերը չեն խմանում Ասի-
ացին ո՛վ է: Եւ հարկաւոր էլ չէ որ խմանա: Դա-
տերը կարծում են որ Ասիացին ինքն խմբագիրն
է: Եւ դարձեալ էլ չէ որ այդպէս են կարծում,
կրք ինքն խմբագիրը չառ անգամ իմ ներկայու-
թեամբ դիմամբ ասել է թէ ինքն է Ասիա-
ցին, կամենալով գաղտնի պահել իմ անունը:

Այսպիսով ես ոչ ոքից չը ճանաչված, ապահով
մտնում եմ ամեն տեղ, ծանօթանում եմ ամենքի
հետ, չառերը ինձ ամեն օր իրանց տան են
տեսնում և երբեք չեն կարող իրանց երեսկայել,
որ ոչ թէ միայն ես եմ «Մշակի» Ասիացին, բայց
որ ես առհասարակ իմ կենդանու մի տողի
չափ բան գրած լինեմ...

Եթէ այդպէս չը վարվի, եթէ չը ծածկէի,
գաղտնի չը պահէի անունս, եթէ խմբագիրը ինքն
չառեր որ նա է Ասիացին, երբեք ինձ չէր աջողի
անել այն, ինչ որ անում եմ, իմանալ այն, ինչ
որ իմանում եմ: Ինձ երբեք չէր աջողի մըտ-
նել այն տեղեր, որտեղ որպէս «Մշակի» յայտնի
աշխատակից ինձ չէին ներս թողնի:

Օրինակ նորերումս Թիֆլիսի Գայեանեան

օրիորդական դպրոցի մէջ հարցաքննութիւններ
կային: Ի հարկէ «Մշակի» աշխատակիցներից ոչ
մէկը հրաւերը չը ստացաւ ներկայ գտնվել հար-
ցաքննութիւններին, որովհետեւ յիշեալ դպրոցի
կառավարող բարձրագոյն ուսում ստացած երի-
տասարդները այնքան բթմամիտ են, որ չեն կա-
րող զանազան ընդհանուր անձնականից: Իսկ
եւ, որովհետեւ այդ պարտնեւորից ոչ մէկը չէ կար-
ծում մինչև անգամ թէ ես եմ Ասիացին, փա-
ռաւոր հրաւերը ստանալով դպրոցի տեսչութե-
նից, կարողացայ ներկայ գտնվել ուսումնարանի
բոլոր հարցաքննութիւններին: Եւ, ճշմարիտն
ասեմ, առհասարակ դուրս երեւցի մի լաւ տպա-
ւորութիւն: Ուսումնարանը կարող եմ ասել ծաղ-
կում է, և սիրտս ուրախանում էր տեսնելով
որ հայոց հասարակութեան ապագայ մայրերը
պատրաստվում են կենքի համար մայր ինչի
լեզուով (թէ ես այն էլ պէտք է ասել, որ ուսում-
նարանում աւանդվող մայրերի, աշխարհաբար
լեզուն չառ մաքուր աշխարհաբար չէ, այլ բաւա-
կան գրաւոր բարբառ և կղերականաց-
րած լեզու է...)

Բայց ուրիշ կողմից դուրս երեւցի և բաւա-
կան տխուր մի տպաւորութիւն և աւելի էլ հա-
մոզեցի այն ճշմարտութեան մասին, որի մասին
առաջ էլ համոզված էի՝ այն է որ մեր ժամանա-
կակից հայոց հասարակութեան մէջ աղամարդիկ,
մինչև անգամ համալսարանական ուսում ստա-
ցածները մտաւորապէս հազար անգամ ստոր են
կանանցից....

Ի՞նչ է պատճառը այդ ալանդակ երեւոյթի, —
չեմ կարող բացատրել: Միայն ներկայ գտնվե-
լով յիշեալ ուսումնարանի բոլոր հարցաքննու-
թիւններին, համոզվեցի որ այն աւարականները,
որոնք դաս են տրվում վարժուհիներից, աւելի
լաւ են դաս տրվում, աւելի լուրջական կերպով
են աւանդվում, քան թէ այն աւարականները, որոնց
դաս են տալիս մեր հասարակական առաջնորդ-
ները, մեր զարգացած անուանված, բարձրագոյն
ուսում ստացած երիտասարդները: Նոյն աղմկե-
ներ, նոյն աշակերտութիւններ ընդունակ, առողջա-

միտ, խելօք էին երևում, երբ պատասխանում էին
այն առարկաներից որոնց աւանդում են նրանց
վարժուհիները, — և անհասկացող, վախկոտ, գրեթէ
բթմամիտ էին երևում, երբ պատասխանում էին
այն առարկաներից, որոնք աւանդվում են ու-
սումնարանում միջնակարգ և բարձրագոյն ու-
սում առած երիտասարդների ձեռքով: Երբ մի
հարց առաջարկում էր մի վարժուհի, աշակեր-
տութիւն նրան հասկանում էր և հասկանալով էր
պատասխանում, իսկ երբ նոյն հարցը ուսում
ստացած — բթմամիտ — խելօք վարժուհի, կամ
տեսուչ էր առաջարկում, երևում էր որ աշա-
կերտութիւն կամ թուլթակի պէս էր պատասխա-
նում անգիր արած խօսքերը, կամ բոլորովին
ոչինչ չէր պատասխանում և չփոթվում էր...
մինչև որ նոյն հարցը կրկին առաջարկում էր
վարժուհիներից մէկը:

Ան ինչ տեսայ, ինչ լսեցի, հաս ինչ անհա-
ւատալի քանի մէջ անձանց համոզվեցի... Եւ
հաս ինչպէս եմ նստում էի նրանց մէջ և նրան-
ցից ոչ ոք չէր իմանում թէ իրանց առաջ նստած
իրանց չառ լաւ ծանօթ երիտասարդը «Մշակի»
ֆելիետոնիս է: Եւ երբեք էլ չեն իմանայ թէ
ես ո՛վ եմ... Իսկ խմբագիրը թող չարտնակէ
զիտմամբ իր բարեկամներին ասել թէ Ասիացին
նա է...
* * *

Իմ ինչ օգնիտ օր չնորմով ես մտայ և Ներ-
սիսեան դպրոցի հարցաքննութիւններին: Առա-
ջին հարցաքննութիւնը, որին ներկայ գտնվեցայ՝
կրօնի հարցաքննութիւնն էր: Ներսիսեան դըպ-
րոցի կրօնի հարցաքննութիւնից ես դուրս եկայ
բոլորովին հիացած, զմայլված... Եւ համոզվե-
ցայ որ հայոց միջնակարգ դպրոցի հիմնադրող,
չորրորդ և մինչև անգամ երրորդ դասատան
աշակերտները վճռում են ամենամեծ հեշտու-
թեամբ այնպիսի խոր փիլիսոփայական — աս-
տուծաբանական խնդիրներ, որոնց հաղիլ թէ
կարող է վճռել գերմանական փիլիսոփայու-
թիւնը...
Եթէ, օրինակ, ձեզ ընթերցող, հարցնեն ինչի

խաբարանիւր մարդը միայն ինքն է լինում պա-
տասխանատու իր գործած մեղքերի և յանցանք-
ների համար, իսկ Աղամը պատասխանատու էր
ամբողջ մարդկութեան համար, — դուք երևի չէք
կարողանալ այդ տեսակ խոր փիլիսոփայական,
հոգեբանական և աստուծաբանական հարցին
պատասխանել... Իսկ Ներսիսեան դպրոցի եր-
րորդ դաստան աշակերտները գիտեն այդ ան-
բացատրելի աստուծաբանական, հոգեբանա-
կան, բարոյական և փիլիսոփայական երեւոյթի
պատճառը, չնորմով իրանց երեւելի կործանողից
ներկայ դարիս նշանաւոր փիլիսոփայ աստուծա-
ծաբանի, բայց զփոխապէս լուսաւորված աշ-
խարհում անյայտ մնացած քահանայ Սուլեյմա-
նի: Պատճառը որ Աղամը պատասխանատու էր
մեր բոլորիս մեղքերի և յանցանքների համար,
ուրեմն այն յանցանքների և մեղքերի համար էլ
որ ինքն չէ գործել և մտածում էլ չէ ունեցել
գործել, իսկ մենք պատասխանատու ենք մի-
միայն մեր անձնական մեղքերի և յանցանքների
համար, — այն է, որ Աղամը մարդկութեան ծառի
արմատ է, իսկ մենք ծառի մրգեր ենք: Ինչ
բան որ անեն ծառի արմատների վրա, ինչ բան
որ խառնեն հողի մէջ, որտեղ ծառի արմատներ
են գտնվում, ամեն բան ներգործութիւն կունե-
նայ ծառի բուսի, ճիւղերի, տերևների, ծաղիկ-
ների և պտուղների վրա...
Եւ այդ տեսակ խնդր հարցեր և պատաս-
խաներ լսելու ժամանակ, դպրոցի տեսուչ, պ.
Մանդինեանը խորամուկ կերպով աչքերը բաց
էր անում ու հուպ տալիս...
Ներսիսեան դպրոցի վրա խօսելով, յիշեցի
հետեւեալ նորութիւնը: Առում են որ այդ դըպ-
րոցի տեսուչ պ. Սեդրակ Մանդինեանը մտցրել
է դպրոցի բոլոր դասատուներում ջուլթակի
(սկրիպկայի) վրա անկուղ դասատուութիւնը,
որպէս զարգացնող ամենամեծ և ամենալա-
մանկավարժական միջոց: Այդ նոր ձևի ընդհա-
նուր կրթողական դասատուութեանից այնպիսի

այդ նորա տուած հրամանը վարդաթիւնը կարողանայ իրագործել:— Կ. Պոլսի հասարակական կարծիքի մի մաս, ինչպէս հաղորդում է Վիճազգային Հեռագրական Բնկերութիւնը մինչև այն աստիճան յուսահատութեան է հասած, որ պահանջում է սկսել Ռուսաստանի հետ խաղաղական բանակցութիւնները:— Արիշ կողմից հին մահմետական կուսակցութեան մոլեռանդութիւնը օրից օր աճում է և կուսակցութեանը պատկանող քանի մի թուրք մոլեռանդ լրագրիւնը առաջարկում են իրանց էջերի մէջ կոտորել թիւրքահապատակ բոլոր շքիտոնեաներին: Այդ վարեւի առաջարկութեան դէմ Կ. Պոլսի եւրոպական հիպատոնները բողբոք են բերակացրին թիւրքաց տէրութեանը:

ՅԱՐԱՍՈՒՄ

Յետադիմական շարժումը մրասարկում, մարշալ Մակ-Մաճոնի ձեռքով կատարված յետադիմ յեղափոխութեանց յետոյ, ընդհանուր է: Մինիստրութեան փոփոխով, փոխլեյտնէ և նախագահները, իսկ այս վերջինները ձեռք տուին իրանց իշխանութեանը ենթարկված գաւառական և քաղաքային խորհրդների արձակելուն և առհասարակ ամբողջ ազմինստարացիայի փոփոխելուն: Հանրապետականների տեղ ամեն տեղ նշանակվում են Բոնապարտեաններ, միապետականներ և կղերականներ: Ճրանխան արագ քայլերով գնում է կամ դէպի կորուստ, կամ դէպի սարսափելի արմատական յեղափոխութիւն: Միակ յոյսը Ֆրանսիական հասարակութեան ազատամիտ մասի նոր ազգային ժողովի համար լինելու պատշաճմաւորների ընտրութիւններն են: Եթէ Ճրանխան նոր ընտրութիւններով կուղարկի ազգային ժողովը հանրապետականներին, այն ժամանակ նա այդ խաղաղ յեղափոխութեամբ յաղթող դուրս կը գալ կղերականների և բոնապարտեանների ինտրիգաներից: Որովհետև Մակ-Մաճոն մարշալը իր համերաշխութիւն է ցոյց տուել յետադիմ կուսակցութեան հետ, հանրապետական մի քանի լրագրիւններ յոյս ունենին որ եթէ դարձ ընտրութիւններին հանրապետական կուսակցութիւնը յաղթող կը հանդիսանայ, Մակ-Մաճոնն էլ իր նոր մինիստրութեան հետ հրաժարական կը տայ նախագահի պաշտօնից: Բայց «Moniteur Universel» պաշտօնական լրագիրը շատպէս հանրապետական լրագրիւններին կիսապաշտօնական կերպով պատասխանելու որ մարշալը, ինչ էլ պատահի, բոլորովին դիտաւորութիւն չունէ թողնել նախագահի աթոռը և հանդիստ մնալու է իր տեղում մինչև ազգային ժողովից իր ընտրութեան պայմանաժամի լծանալը, այսինքն մինչև նոյեմբերի 20-ը 1880 թ.ի:— Մի քանի երիտասարդներ Փարիզի «Grand-Hotel» շինութեան առջև, որի մէջ այն օրը հանրապետական պատգամաւորների ժողով էր կայացել, աղմուկ արին, կանչելով՝ «Բնեցէ, Գամբետտա», «Կորչել Մակ-Մաճոն»: Այդ երիտասարդներից երկուսին դատարանը բանտարկութեանը դատապարտեց:— Նոր մինիստրութեան նախագահ, հէրցոգ Բոլոն, այս օրերս մի պաշտօնական հրաման հրատարակեց, որից երևում է թէ շուտով կատարվելու են հիմնական փոփոխութիւններ Ճրանխի բոլոր կառավարչական աստիճանների վրա:

ԱՐՏԱՔԻՆԻ ԼՈՒԻՐԻ

— «Journal de St. Petersburg» լրագրին հաղորդում են Կ. Պոլսից որ Թիւրքաց տէրութիւնը նորերում պահանջեց յայնեից և հայերից որ նրանք կազմեն իրանց միջով բրիտանիկա զօրք, Թիւրքիա պաշտպանելու համար: Բայց երբ տէրութիւնը ուղարկեց այդ կարգադրութեան մասին թուղթը Կ. Պոլսի հայոց պարտիքագին, որ սա ստորագրէ այդ թուղթը և իր համաձայնութիւնը

፩ ሀ. ፩ ስ ሀ. ሶ ሀ. ሶ በ ኩ ሾ ኩ ኩ ን ን ቴ ሶ

1742

Ընդք առիթ ունեցանք տեսնել թիֆլիսի Ամերիկական մադագինում Ամերիկայից բերած զինուորական շատ յարմար վրաններ, Հատը արժե 100 ռուբլ:

ДАМА французжанка желаетъ имѣть въ частныхъ домахъ уроки французскаго и англійскаго языковъ. Спроситъ объ адресѣ въ редакціи газеты «Миръ».

6-10

ВЪ ТИФЛИСЬ У ЦУРИНОВА

Խմբագիր — Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ